ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կալիֆորնիայի Ասամբլեայի թիվ 1826 օրինագիծը պարտադրում է այն բիզնեսներին և պետական կազմակերպություններին, ինչպես նաև բազմաբնակարան շենքերին (հինգ կամ ավելի բնակարան ունեցող), որոնք շաբաթական գեներացնում են 2 խորանարդ յարդ կամ ավելի պինդ թափոն, հիմնել և գործարկել կոմերցիոն օրգանական թափոնի վերամշակման ծառայություն: Օրգանական թափոններ են համարվում սննդի թափոնները, կանաչ թափոնները, լանդշաֆտային և այգեգործական աշխատանքների թափոնները, ինչպես նաև ոչ վտանգավոր փայտի թափոնները:

Նահանգային պահանջների համաձայն՝ թափոն գեներացնող համապատասխան բիզնեսները պետք է.

- Առանձնացնեն օրգանական թափոնները մյուս թափոններից և մասնակցեն քաղաքի թափոնների վերամշակման ծառայությանը, որը ներառում է օրգանական թափոնների հավաքումը և վերամշակումը: Զանգահարեն Burrtec-ին՝ բաժանորդագրվելու համար, կամ
- Վերամշակեն իրենց օրգանական թափոնները տեղում, կամ ինքնուրույն տեղափոխեն իրենց օրգանական թափոնները՝ տարածքից դուրս վերամշակման համար, կամ
- Նվիրաբերեն իրավասու ստացողին:

Զանգահարեք մեր Հաճախորդների սպասարկման գրասենյակ այսօր՝ (661) 222-2249 հեռախոսահամարով, պահանջներին ձեր համապատասխանության մասին հաղորդելու կամ թափոնների, վերամշակման և օրգանական նյութերի անվճար գնահատում պլանավորելու համար:

Օրգանական թափոնի նյութեր

Սննդի թափոն

Լանդշաֆտային թափոն

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ - ՁԵՐ ԲԻԶՆԵՍԸ ՊԱՀՊԱՆՈ՞ՒՄ Է ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ասամբլեայի թիվ 341 օրինագիծը պարտադրում է այն բիզնեսներին և պետական կազմակերպություններին, ինչպես նաև հինգ կամ ավելի բնակարան ունեցող բազմաբնակարան շենքերին, որոնք գեներացնում են 4 խորանարդ յարդ կամ ավելի պինդ թափոն, հիմնել և գործարկել վերամշակման ծառայություն: Burrtec-ի վերամշակման համակարգողները կարող են օգնել վերամշակման համապատասխան ծառայության մակարդակի ընտրության հարցում, ինչպես նաև անհրաժեշտ ուսուցում և տեղեկատվություն տրամադրել ղեկավար անձնակազմին: Զանգահարեք մեր Հաճախորդների սպասարկման գրասենյակ այսօր՝ թափոնների և վերամշակման անվճար գնահատում պլանավորելու համար: